ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ
ՏԻԳՐԱՆ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

(Հաշվետու ժամանակահատված՝ 2026 թվականի հունվարի 12-ից մինչև 2026 թվականի փետրվարի 11-ը)

Ես՝ Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) Հայտարարագրերի վերլուծության վարչության (այսուհետ՝ Վարչություն) փորձագետ Աշխեն Քոչարյանս, հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ ստորև ներկայացված հետևյալ աշխատանքները, մասնավորապես.

1) Հանձնաժողովի Կրթական, հանրային իրազեկվածության ծրագրերի և մոնիթորինգի վարչության կողմից մամուլում տեղ գտած հրապարակումների հիման վրա ներկայացված Զեկուցագրերի ուսումնասիրության ու համապատասխան վերլուծության արդյունքում Վարչության կողմից ամփոփ տեղեկանքների նախագծերի նախապատրաստում, որտեղ համապատասխան ուսումնասիրության և մասնագիտական վերլուծության առարկա են հանդիսացել մի շարք հայտարարատու պաշտոնատար անձանց (թվով՝ տասնինը /19/ անձ) կողմից Հանձնաժողով ներկայացրած համապատասխան հայտարարագրերը:

2) Հայտարարատու պաշտոնատար անձանց վերաբերյալ մամուլի հրապարակման հիման վրա կատարված տվյալների ստուգման արդյունքում իրականացված՝ Հանձնաժողով ներկայացրած հայտարարագրերի համալիր վերլուծություն և վերլուծությունների արձանագրությունների նախագծերի (թվով՝ մեկ /1/) կազմում:

3) Հանձնաժողովի՝ Վարչության վերաբերելի օրակարգային հարցերին առնչվող նիստում կայացված որոշումների արդյունքում Հանձնաժողովի կողմից ելքագրվող գրությունների, մասնավորապես՝ հայտարարագրված տվյալներում փոփոխություն կատարելու վերաբերյալ դիմում ներկայացնելու, բացի այդ, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու այլ անձան հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց առնչվող տեղեկություններ և փաստաթղթեր պահանջելու ու ստանալու վերաբերյալ գրությունների նախագծերի (թվով՝ հինգ /5/) նախապատրաստում:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
Հայտարարագրերի վերլուծության վարչության
փորձագետ՝ Ա.Քոչարյան